
Բանաստեղծություններ

Կրկին քո նկարն է աչքերիս,

Կրկին դու ես աչքերիս,

Հեռու ես դու ինձնից

Բայց միշտ աչքերիս առաջ քո պարզ դեմքն է երևում,

Երևում է մազերդ երկար՝ ինչպես երկար մի առվակ,

Երևում է ժպիտդ աչքերիս առաջ՝ ինչպես փայլուն արեգակ,

Այնքան պայծառ շողացիր...աչքերս փակվեցին,

Իսկ երբ բացեցի աչքերս՝ երևում էր միայն արեգակը:

Ու՞ր է իմ սերը... Ո՞վ կարող է ասել,

Ու՞ր է իմ սիրտը...Ո՞վ կարող է ասել,

Որտեղից են լսվում սրտիս զարկերը... Ո՞վ կարող է ասել,

Միայն ես գիտեմ այդ հարցի պատասխանը,

Հեռավոր Արցախում:

Թաց աչքերը իմ նայում են քեզ՝ դեպի երագ,

Իմ մտքերը հեռավոր՝ քեզ են տեսնում ամենուր,

Նայում եմ լուսնին հեռավոր,

Եվ հիշում,որ վաղը նորից արև է շողալու:

Այս գիրքն անվճար է և նրա ամբողջական տարբերակը կարդալու համար անհրաժեշտ է ձեռք բերել այն և ներբեռնել Ի՛ն գրքեր բաժնից:

Անցնել գրքի էջ